որ վրանի մօտից հեռու չգնան: Ես եւ Ասլանը մտանք վրանը, իսկ երկու երիտասարդները մնացին դրսում, որ ձիաներին հոգ տանեն:

Հէնց առաջին անգամից այդ վրանը իմ վրայ այն տպաւորութիւնը գործեց, կարծես թէ ճգնաւորի խուց լինէր, կամ մի ղալանդերի (դերվիշի) տաղաւար, որ ժամանակաւոր կերպով կազմում է մի մեծատան դռան մօտ, նրանից իր պահանջը ստանալու համար:

Արեւելքում այդ սովորութիւնը այնքան յատկանիշ կողմեր ունի, որ աւելորդ չեմ համարում փակագծի մէջ դնել նրա համառօտ նկարագրութիւնը: Դերվիշը դիմում է այս եւ այն մեծատանը: Պահանջում է կա՛մ մի մեծ գումար եւ կա՛մ մի այլ շնորհ: Նա ընտրում է ըստ մեծի մասին այնպիսի անձանց, որոնք իրանց հարստութեանը միայն իրանք են վայելում: Ժլատ մեծատունը, ի հարկէ, մերժում է նրա պահանջը: Դերվիշը իր տաղաւարը կազմում է մեծատան գլխաւոր մուտքի հանդէպ եւ հանգիստ կերպով սկսում է ապրել այնտեղ: Նա իր տաղաւարի շուրջը գարի է ցանում, որը արդէն նշան է, որ մինչեւ գարին չբուսնի, չաճի եւ չհասունանայ, նա չի հեռանայ իր բռնած տեղից: Ամէն առաւօտ, ամէն երեկոյ, կէս-գիշերին, փչում է նա իր եղջերափողը, նրա անախորժ ձայնով մեծատանը անհանգստացնելու համար: Իսկ երբ մեծատունը, տանից դուրս է գալիս, նա սկսում է պարսանոէր երգել: Երկրի մէջ ընդունուած սովորութեամբ՝ մեծատունը իրաւունք չունի այդ արտօնաւոր մուրացկանին իր դռնից քշելու: Եթէ վիրաւորէ նրան, բոլոր դերվիշները կը հաւաքուեն եւ մեծ խայտառակութիւն կը սարքեն: Կը շրջապատեն ժլատի տունը, կը սկսեն իրանց եղջերափողերը փչել, բազմութիւնը կը հաւաքուի, իսկ նրանք կը շարունակեն իրանց խառնաձայն նոագածութիւնը: Մեծատունը մէկ դերվիշի փոխարէն կունենայ մի քանի տասնեակներ եւ ստիպուած կը լինի բոլորին բաւականութիւն տալ: Որպէսզի այդպիսի անախորժութիւններ չպատահեն, մեծատունը շտապում է կատարել դերվիշի պահանջը, իսկ նա իր ստացած գումարը բաժանում է աղքատներին եւ հեռանում է:

Մեր մտած վրանը, իրաւ է, դերվիշի տաղաւարի նման էր, բայց նրա մէջ բնակողը դերվիշ չէր: Նա մի հոգեւոր անձն էր, որին ալլահը շնորհել էր գուշակութեան ոգի:

Նա նստեց վրանի այն կողմը, որտեղ դրած էր նրա գիրքը. ես եւ Ասլանը տեղաւորուեցանք նրա աջ եւ ձախ կողմերում:

— Դուք կարդում էիք, — ասաց Ասլանը, — մենք ձեզ խանգարեցինք: